

50րէ ԼՈՒՐ-Գրգորյան

18373

Եւ շարեւ ինչ
կուճ
երկուս սիրահար

2-րդ-ուս

891.99
S-38

Ե-1895

468

ԵՆ ՉԱՐԷՍ ԻՆՉ
ԿԱՄ
ԵՐԿՈՒ ՄԻՐԱՀԱՐ

ԿԱՏԱԿԵՐԿՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

4

ԵՐԵՒԱՆ

ՏՊԱՐԱՆ ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ

1895

891.99
8-38

891.93

151-38

ար

ԷԼ ՉԱՐԷՍ ԻՆՉ

Կ Ա Մ

ԵՐԿՈՒ ՄԻՐԱՀԱՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Մ Ե Կ Ա Ր Ե Ր Ո Ւ Ը Ծ Ո Վ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԵՄԻՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

4

Печатана съ изданія 1879 г. съ исправленіями.

ЭРИВАНЬ

ԵՐԵՒԱՆ

ТИПОГРАФІЯ ЭМИНА ТЕРЬ-ГРИГОРЯНЦЪ СՊԱՐԱՆ Է .ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

1895



2003

4077

4809

Дозволено цензурою. Тифлисъ, 16 Августа 1894 г.

ԷԼ ՉԱՐԷՍ ԻՆՉ

ԿԱՄ

ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԵԼՔՕ, հարուստ վաճառական, ծերունի:

ԽՈՐԻՇԱՆ, նորա կինը:

ՇՈՒՇԱՆ, նոցա աղջիկը, ինտիտուտում կարգացած:

ՆԻԿՕԼ, նորա սիրեկանը, գիմնազիայից աւարտած:

ԲԺԻՇԿ:

Անցիւ պատահում է Տֆիխում:

ԷԼ ՉԱՐԷՍ ԻՆՉ

Կ Ա Մ

ԵՐԿՈՒ ՍԻՐԱՅԱՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ:



Ետարանը ներկայացնում է Մելքոյի պարտէզը: Աջ կողմում երևում է նորա փողոցի վերայ նայող տունը: Խորքի պատը բաժանում է պարտէզը փողոցից:

ՏԵՍԻԼ. 1.

ՆԻԿՕԼ, ձախ կողմից ծածուկ գալով:

Այստեղ չէ... այստեղ չէ սիրուհիս... (Լուսնն է Լուսնը): Ա՛խ իմ ծնողք, ի՞նչ կլինէր, որ դուք մի քանի շահի յետ գցած լինէիք ինձ համար, որ այս օրուայ օրը՝ ես խեղճ չմնայի այս անշնորհ ծերունու ձեռքին, որ իմ այս ան-

նմանս, այս նազելիս չթուչէր ձեռքիցս... Ա՛խ, մինչև ե՞րբ ես պիտի այսպէս տանջուեմ ու մամաշուեմ... (Լաւա՛ն)։ ... Եւ այս քաւթառքոսին, որ ոչ հալ կայ ջանումը, ոչ խելք կայ գըլխումը, ոչ ուժ կայ ոտներումը, ոչ էլ մի մարդկութեան շնորք կայ վերան, հենց կենում է կենում ու ասում «նրա պէս սովածին ախչիկ չիմ տայ, չէ՛»։ Մէկ էլ, լսեմ, որ ուզում է իր այս պատուական աղջկան, այս այնման հրեշտակին, տանի տայ էն Դանդումանենց տղայ Կակուլուն, ի՞նչ է—մի երկու երեք շահի փող ունէ... (Գըլխին իջեւել) վայ գըլխա, մեռնես ու այս տեսակ բան չտեսնես—(Դեպի լաւա՛ն)։ Ա՛խ, Շուշանիկս, մի նայիր լուսամուտիցդ է՛, քու քաղցր ժպիտդ գո՛նէ մի բոպէ ևս ինձ ընծայիր... միթէ չգիտես, որ իմ երջանկութիւնս կախուած է քո քաղցր ժպիտիցդ... միթէ չե՞ս զգում, որ ես այստեղ եմ, սպասում եմ տեսութեանդ... Ախ գիտեմ գիտեմ սիրուհիս, սպասում ես իմ ձայնիս, իմ երգիս... ես պատրաստ եմ քեզ համար (Երգում է հեթանալը շատ մեղմ ձայնով ¹⁾)։

«Սիրուհիս, քեզ համար կեանքս կէս էլաւ,»
Քո անունդ էր միայն, որ ինձ կեանք տուաւ։

Հալում եմ, մաշում եմ ես այստեղ անճար,
Այրում եմ ու այրում, եկած քեզ համար։

¹⁾ Այս երգը պատկերւում է երգչուհի Բուրբուսի կողմից։ Ինչ որ իմ երգում գրուած է, ինչ որ ասում եմ, դա իմ իրական խոսքն է։

Ախ գթա՛, մէկ ժպտա՛, դու իմ աղաւնիս,
Մէկ նայիր դու ինձի, տես սիրտս ու հոգիս։
Բայց ո՛ւր ես, չեմ տեսնում քեզ, իմ մանուշակ,
Քո ձայնդ չեմ լսում, երկնային հրեշտակ։

Երեւիր, յայտնուիր, սիրուհիս, ո՛ւր ես,
Ես այստեղ, շատ վաղուց, սպասում եմ քեզ։

ՇՈՒՇԱՆ, կուրսի յետեից երգով պատասխանում է։
Եստի իմ լսեցի... ¹⁾

ՆԻԿՈՒՆ.

Ա՛հ, այս նորա ձայնն է, որ դագաղիս միջից
ինձ դուրս կքաշի...

(Աղանջը դարձնում է այն կողմը, որից լսում է ձայնը. ուշի ուշով ախա՛նջ դնելով երգին, յայտնում է իր սրտի զգացմունքը թէ շարժմունքով, թէ երեսի ձևացրած զմագրութիւններով և թէ ժամանակ առ ժամանակ թառաչներ հանելով սրտի խորքից և ցոյց է տալիս, որ նորա երգը մեծ տպաւորութիւն է գործում իւր վերայ)։

ՇՈՒՇԱՆ, կուրսի յետեից։

... քու քաղցր ձէնը,

Վարդ կորցրած բուրբուլի՝ խաղումիս դերը։

Ախ, ափսոս չիմ կանայ, վուր գամ քիզ տեսնիմ,
Իմ սիրով վառ սրտիս, փափագը առնիմ։

ՆԻԿՈՒՆ, աւելի վառաւած։

Մանուշակ, նուազութար, վարդ ու գեօրգին,
Ոչինչ եմ առաջիգ, սիրուհի անգին։

Քաղցրախօս սովաւիւր...

¹⁾ Այսպէս բաժանուած է նախ համար, որ Նիկուն ինչպէս իմանայ իւր խօսքի իմաստը։ Շուշանը չպիտի է նայի իմ լսեցի՝ երգի ու դարձնում է ինչպէս Նիկունը աւարտելէ, այլ պիտի է շարունակէ աւանդ իմ խօսքի, աւել է իմ, Շուշանը ինչպէս երգում է երգում, ինչ Նիկունը նախ ձայնը լսելէ ետէ վերայ է իմաստ և ապա յայտնում է իմ խօսքի իմաստը և վերայ գործում տպաւորութիւնները, ինչպէս յիշած է քաղցրի մեջ։

ՏԵՍԻԼ 2.

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՆԻԿՈԼ

ՇՈՒՇԱՆ, շտապաւ ներս է մտնում աջ դռնից:

Նիկոլ ջան, փախի, գէգէն իմ իրգիցը բան
Հասկացաւ ու, թէ ասիմ, քու ձէնն էլ իմացաւ...

ՆԻԿՈԼ, վառուած և խկոյն գրկելով:

Ախ, սիրուհիդ իմ, հրապուրիչդ իմ, մի համ-
բոյր, մի համբոյր...

(Կամենում է համբուրել, բայց այս միջոցին մայրը մի մութաբայ
ձեռքին վրայ պրծնելով, կամենում է խրել Նիկոլին, բայց, որովհետև
Նիկոլը խկոյն կռանում է, մութաբէն անցնում է և կաշում ձախ կող-
մից ներս եկող Մելքոյին, որը փոքր է մնում վայր ընկնի, բայց հազիւ
բռնուում է: Շուշանը փախչում է աջ):

ՏԵՍԻԼ 3.

ՄԵԼՔՈ, ԽՈՐԻՇԱՆ ԵՒ ՆԻԿՈԼ

ՄԵԼՔՈ, վախեցած և զարմացած:

Վա, ի՞նչ խաբար է: (Նկատում է Նիկոլին):

ԽՈՐԻՇԱՆ, խկոյն:

Նիկոլը, քա, Նիկոլը...

ՄԵԼՔՈ, շտապաւ:

Տօ բռնէ, բռնէ:

(Սա և կինը վրայ են գալիս, որ բռնեն: Նիկոլը չկարողանալով
փախչել, մնում է երկոցունց մէջ տեղ, բայց, նկատելով որ արդէն
բռնուում է, խկոյն կռանում է և նոցա միջից մեծ ճարպիկութեամբ
զուրա է թռչում: Փախչում. դոյն խկ միջոցին Մելքօն և Խորիշանն
էլ են կռանում, բռնեն նորան, բայց նոր արգելք. երկոցունց
գլուխները սաստիկ կաշում են իրար):

ՏԵՍԻԼ 4.

ԽՈՐԻՇԱՆ ԵՒ ՄԵԼՔՈ

ԽՈՐԻՇԱՆ, չանչելով:

Վա, Փեթխայինը անի բու գատաստանը, Նիկոլ:
(Գլուխը բռնած, հարբածի պէս, վաղուէ արան: Դեպի աջ):

ՏԵՍԻԼ 5.

ՄԵԼՔՈ, միայն, սաստիկ շլմած:

Գլուխս, ուֆ, գլուխս, ուֆ, ուֆ, ուֆ...
խեղճ Խորիշան, էս հանգի վուր իմ գլուխն է
տրաքում, բաս քու... վոյ մէ, վոյ մէ, դէդի, վոյ
մէ... (Վախեցած յետը քաշելով): Տօ, էս ա-
րին է՞, վուր էսենց էրեսովս դէվէր է գալի՞...
(Հապառ-եղէ): չէ՞, տօ, քրտինք է քրտինք... մի-
թամ ինչ արմնալու բան է արինը... ուֆ...
ուֆ ուֆ... էն հանգի վուր գլխնիրս կպան հա,
թէկուզ թոփի գուլլէք ըլէին կուգիմանային
վուր... Վա, էս ի՞նչ է, գլուխս էնէնց է պը-
տուտ գալի, կօսիս հինգ թունգի գինի ըլիմ կոն-
ծած... Ըրմ... (Իբր նայ է հասկանալու): Էս էնգուր-
մէն է... (Հարբածի պէս...) Վա, իսկի վուտնիրիս
վրայ էլ չիմ կանացի կանգնի ու... Վոյ քի, վոյ քի,
Խորիշան... իս ¹⁾ վուր էս հանգի իմ բաս գո՞ւն
ինչ հալում պիտիս ըլի... Մէ գնամ տեսնիմ չը-

¹⁾ Ահապարտ իս բառը, որ ցոյց է տալիս արագին դեմք—ես, արագ-
վառելու ժամանակ պիտի խառնել ին հետ և արագ կոտորան հանաւ. որ և
իւրի երես:

լի՞ մէ բաշ փուտնիրը մէ գնած ըլի ու աչքիրը
չուած... (Դնալով դէպք ալ) Ինչ փուր էս գիշիւր
մէ փիս էրազ էլ իմ տեսի:

ՏԵՍԻԼ 6.

ՇՈՒՇԱՆ, ներս վազելով և ծիծաղելով, աջ կողմից:

Այ՛ օյին... խեղճ մամի ու դէդի... (Նայելով չորս
կողմը) զուրդ մամէն խօսմ էստի չէ դէվէրննգի...
(Ծեծալ) չէ նա էլ է գնացի դէդու մօտ... ան-
ջախ, դէդէն իրեն գցից տուն... Վա՛յ Նիկօլ,
էսէնց էլ ֆանդրազուլթի՞ն... մութաքէն, վուր
գլխումը պիտի անուշ անէր, մամիս ուտեցրից,
վուր պիտի մամիս ու դէդիս ճանգը ննգնէր ու
մէ լաւ դնքսուէր, էնէնց արաւ, վուր իսկի նրանք
էլ ուրախ չէլան... (Ծեծալ) Դէ արի ու էս հանգի
տղին մի սիրի, դէ արի ու էս հանգի տղին
մութէմէդ քցի... ատի... (Վճռողաբար) Չէ, իս
հոգով ու մարմնով նրաննիմ ու նրանը...

ՏԵՍԻԼ 7.

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՄԵԼՔՕ

ՄԵԼՔՕ, վերջի խօսքերը լսելով և ներս գալով աջ դռնից:
Էդ ո՞ւմնիս, ո՞ւմը...

Վա՛յ մէ: ՇՈՒՇԱՆ, վախեցած:

ՄԵԼՔՕ

Չէ, մէ ասա թէ Աստուծ կու սիրիս:

ՇՈՒՇԱՆ

Ախր ի՞նչ ասիմ:

ՄԵԼՔՕ

Դուն էդ ո՞ւմնիս հոգով ու մարմնով:

ՇՈՒՇԱՆ, խորագիտութեամբ:

Վա՛, բաս չի՞ս իմանում:

ՄԵԼՔՕ

Չէ:

ՇՈՒՇԱՆ

Ո՞ւմը պիտիմ, բաս ձիւրը չի՞մ:

ՄԵԼՔՕ

Այ բա՛ն: Չէ, նուր վուր ասիր „նրաննիմ ու
նրանը“ էդ ո՞ւմ համա էիր ասում:

ՇՈՒՇԱՆ, նկատելով որ չը յաջողեց իւր խորագիտութիւնը կար-
մում է, իսկոյն վերցնում է մութաքէն և գնալով դէպի աջ:

Է՛ Է՛ Է՛... շատիս բանի յիշէմէն ննգնում:

ՄԵԼՔՕ, ետևից:

Վա՛, բանիմ հարցնում... է է Է՛... յ:

ՏԵՍԻԼ 8.

ՇՈՒՇԱՆ, կույիսի ետևից:

Դէդէն կանչում է:

ՄԵԼՔՕ, բարկացած:

Վա՛, էստի արի, ասումիմ է՛:

ՇՈՒՇԱՆ, կուլիսի ետևից և իբրև հետուից,
Բանս ի՞նչազն է:

ՄԵԼՔՕ, չարացած:

Տօ, էսէնց էլ բան իք տեսի՞... Հիմիկուայ
ախշկիրանց յիդ էլ չէ ըլում խօսիլ... խօսկիդ
պատասխանն էլ չի ուզում տայ... Տէ՛ր օղորմած

Աստուծ... (Ման է Գալիս) Ըրմ... իս իմացայ դիւի
իմացայ... տօ սա էլ է նրան սիրում էն չաթու-
քասան շարլատանին... Թէ վուր չէ սիրում, բաս
նրա յիդ ի՞նչ բանէ ունեցի էստի... (Մարտիան է:)
Վոյ վոյ վոյ վոյ, ղուրթ Խորիշանը ասում էր Թէ՝
քիչ էր մնացի, վուր պաչ էր արի... Ըրմ... այ
թուրմէ ինչ բան է էլի... Տօ, ղուրթ հէնց էտու
համա էր, վուր մութաքէն բոյէբոյ ջանումն
նստեցաւ է...
~~~~~

## ՏԵՍԻԼ 9.

### ՄԵԼՔՕ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ

ԽՈՐԻՇԱՆ, ներս գալով աջ դռնից:

Ղուրթ, ա՛ մարթ, ախար մէ ասա տեսնիմ, ի՞նչ  
պիտի ըլի միւր ախչկայ ճարը, Թէ վուր էգուցէվէտ  
մէ ճար չանիս, հենց իմացի վուր ջուրն էկիլ է  
ու միզ տարի:

ՄԵԼՔՕ, ծաղերով:

Ահա հա հա, ջուրն էկիլ է ու միզ տարի... Ախար  
ինչի՞ է տարի, ո՛ւմնիցն իմ վախենում: Իս գիտիմ  
ու իմ ախչիկը:

ԽՈՐԻՇԱՆ

Ախար էս նիկօլը շատ է գնում գալի, ու էս  
հանգի անհամաթիւննիր անում: Էս միւր կապ  
կտրածի համա:

ՄԵԼՔՕ

Բէհէսաբ նամաղուլ է անում:

ԽՈՐԻՇԱՆ

Թէ ասիմ, Շուշանն էլ է նրան ուզում:

ՄԵԼՔՕ, չարացած:

Նա էլ նրա հիդն է բէհէսաբ նամաղուլ անում:  
...Տօ, ի՞նչ իս ասում: Դանդումանինց Կալուլու  
մէ ճկիթը՝ կու փոխիմ իս սաղ վուտով ու գլխով  
ուսում առած նիկօլի հիդ: (Մաղբէլ): Ուսում  
առած իմ կօսէ. դիմնազի վից կլասեմէն գուս  
էկած իմ կօսէ: Թէ վուր ուսում առած իս, քու  
աշխատանքը վո՛ւրն է, չիմ տեսնում: Կուրս հինգ  
գուքնիրը ապրանքեմէն զմբղմբումին այ, ան Թէ  
չէ, մուշտարու ձեռնեմէն քրտնքի մէջ ծլծլում  
է այ... Գնա՛, գնա՛, գլխեմէս ուղ իլ, իս քիմէն  
էտունք ուփրօ շատ իմ հասկանում:

ԽՈՐԻՇԱՆ, չարանալով:

Վա՛, էլի գուն էրգարացրի՞ր... Մաշ իս մեր չիմ,  
մաշ իս իմ ախչկայ վրայ էլ իրաւունք չունիմ...  
հէնց էրկու գլուխն էլ քու ձեռնիս վիկալել ու  
իժում: Ախար դու մէքու չորս դիհն էլ թամաշ  
արա, ախ խալխը վունց է էգ հանգի բանումը  
ժաժ գալի, էնէնց էլ գուն ժաժ արի է...  
~~~~~

ՄԵԼՔՕ

Տօ, ի՞նչ իս բռբռթում... Ում վրայ իս բռ-
բռթում... Զէ, մէ ասա տեսնիմ քաղքի տղիր-
քանցը գուն իս լաւ ճանչնում Թէ իս, գուն իս
ամեն օր նրանց հիդ նստում վիկենում: Թէ իս,
գուն իս նրանց չարն ու բարին իմանում Թէ իս...
Լա՛ւ, էգ էլ զրազ գնինք: (Յոյց պալի էր պա՛ն ու
պէղը) Էս սաղ տուն գնուղն ու պահուղն ո՛վ է...
ձիզ գլխունանցդ ապրեցնուղն ո՛վ է... էս տան
փուղ դատուղն ո՛վ է: (Փաղն մի առանջին նշանաւոր-
նէն պալի) Փո՛ւղ իմ ասում, փո՛ւղ... փո՛ւղ վուր

աշխարհի կինը տուռուղն է, աշխարհի ապրեցնու-
ղըն է. էն վերջի նօքրից բռնած ինչու էն մինձիրը՝
նրա համա ին գիւի չարչրվում ու տանջուում: . .
ու հիմի դուն ուզումիս ինձ հիգ բարաբար
վուտ մէգնի՞ս: Ձէ, չիս հաւանում առածիս, գնա
մէ էրկու իրիք ¹⁾ շահի էլ դուն տուն բի, օղօնց
քու հալալ քրտինքով աշխատած ըլիս, ու իժում
արի մինձ մինձ ձեռն ու կտրէ:

ԽՈՐԻՇԱՆ, նեղացած:

Է՛լաւ, իս հէջ: Հիմի դուն հաստատ ուզում
իս՝ Կակուլուն տաս, էլի, ախչիկտ:

ՄԵԼՔՕ

Հաստատ:

ԽՈՐԻՇԱՆ

Բաս մէ չի՞ ըլի, վուր Շուշանի կամքն էլ հար-
ցընիս... ախար խիլքիգ զօռումիս ի՞նչ, տեսնու-
միս վուր...

ՄԵԼՔՕ

Ձի՛ ըլի չէ... ինչո՞վ չիմացար... Ձէ ու չէ...
Իս իմ գիտեցածը կօնիմ: Վուչ դուն իս էտունք
հասկանում, վուչ էլ քու ախչիկը... նա, վուր իր
խէրնուշառը ըլի հասկանում, Կակուլու պէս
զոչաղ ու հարուստ տղին կու թողնէ ու էն
հանգի սոված շարլատանի հիգ կուննգնէ... Իս
քիզ քանի ջէր ասիլիմ ու հիմի էլ ասում իմ.
դուն կոտրած քթալի զայգայ մի խառնուի իմ
գուրծքի մէջ. դուն էն վուրտն ուրախացի, վուր բա-
նը վերջացած կուտեսնիս: Ել ախչկայ կամքը վո՞ւր
է... նրա կամքն էլ էն պիտի ըլի, ինչ վուր իմն է:

¹⁾ Պիտի արդասանել էրիք:

ԽՈՐԻՇԱՆ, նեղացած և չարացած:

Է՛հ, թէ վուր էտէնց է, հէնց վունց գուդիս
արա... վունցօր անիս էլ՝ իս իմ ախչկան կու օրհ-
նիմ, ամա միզքն ու վաճքը քիզ: Դէ՛ հիմի
դուն գիտիս: (Դնո՞ւ է Դէպի աջ:)

ՏԵՍԻԼ 10.

ՄԵԼՔՕ, միայն, ետեից:

Հալբաթտա վուր իս գիտիմ: (Հանդիսանայ:)
Անիկարմատի խիլք էլի, ձեռաց կակղիլ է: (Ման-
է Գուլիս և Դառնո՞ւ է:) Ամա թէ դրուստն ասիս,
կակղելու բան էլէ է՛. ջէհիլ աղչիկ, ջէհիլ տղայ,
էրկունն էլ՝ միթօմ՝ ուսում առած, վունցօր ըլի,
էլի մէ իրար կու տեսնին... Ձէ՛ շատ փիս է սորվի
Նիկօն միր բախչի դուն ու քունջ ու պու-
ճախը... դրամէն փիս բանիր դուս գուքայ...
Ինչ անլազաթուլին, վուր դուս չգայ է՛, միզ
արմնալուն էն է: Ձէ՛, էս էրկու օրը իս տանէ-
մէն վուստ դուս չիմ գնի, ան թէ չէ վուր գնիմ էլ,
ուշումիտքս տան վրայ պիտիմ ունենայ: (Մա-
ռո՞ւ է:) Հա, զուրթ մէ գնամ... (Դնո՞ւ է Դէպի յախ:)

ՏԵՍԻԼ 11.

ՇՈՒՇԱՆ, միայն, ներս գալով աջ կողմից տխուր:

Մամէս էլ գնաց, ամա խիստ էր շտապում...
գիտիմ ինչ վուր է՛ էլի ինձ ամա կուլի...
(Մառնո՞ւ է:) Ա՛խ Աստուծ, ախ Աստուծ, էս
էլ օր է, վուր քաշումիմ, էս էլ կինք է, վուր
ապրումիմ... զօռով ուզումին սիրիլ տան ինձ

նրան, վուրին ես վուլ մի վուխտ չիմ կանա սիրի,
 նշին նրա հիդ, վուրին իս իմ հոգեհանս պի-
 տիմ գիտեանայ... (Մեջոյ) Հարուստ է, կօսէ, վուլ
 շատ ունէ, կօսէ, լաւ տնիր ունէ, լաւ առու-
 տուր ունէ, նրամէն լաւն ու զոչաղը չիս գտնի,
 կօսէ... Ախար իս ի՞նչ անիմ նրա վուլը, վուր մէ
 մարթութին չունէ, իս ի՞նչ անիմ նրա հարստու-
 թինը, վուր կի՞նք չունէ, ի՞նչ անիմ նրա առու-
 տուրը, վուր ուսում չունէ, ի՞նչ անիմ իս նրա
 տնիրը, վուր իս նրա մէջ բայղուշ պիտիմ դառնայ
 ... (Մեջոյ) Ախար իս վուլնց ուղիմ կակուլուն ու
 թողնիմ նիկուլին. իս նրա վո՞ւր մէ բանը մօռա-
 նամ, նրա ուսումը, նրա խիւքը, նրա ժաժ գալը,
 քաղաքավարութիւնը, մարթութիւնը, շնուրբը,
 երգերը... վո՞ւր մէկը, վո՞ւր: (Մասնէլ և
 իշտալաբար): Զէ, չէ. իս նրանիմ ու նա էլ իմն է
 ... Ամէն բան վիզս կառնիմ ու իս իմ գիտեցածս
 կօնիմ: Ան նիկուլը, ան գերեղման... (Ման է Գալիս
 արտաք և արտի խորից Բաւալ հանելով երգած է ¹):

Էսէնց իրանք դնումին հուղը

Ու բաժանվում վուրթուց քնքուշ,

Այ, հէնց էն վուխտ, ծնուղքի լացը՝

Աւիլնուրդ է ու խիստ շատ ուշ:

(Հոգեւոր է հանձն): Ախ, նիկուլ ջան, վո՞ւրդի իս,
 մէ արի է... մամէս հագիր տանը չէ ու դէդէն
 էլ քնած է:

¹⁾ Երբ սկսուելուն պէս երևում է նիկուլը ձախ կողմից: Շուրանը
 չէ նկատում: Նիկուլը սի փոքր հեռանում է, ծառանկար կուլիս տակ
 կանգնում է և լսում է իւր սիրուհու երգը: Նորա երեսից, նորա շարժ-
 մունքից պարզ արտայայտում է իւր սխառած սրտի զգացմունքը,
 ունիլ և իւր վերայ գործած տալտորութիւնը:

ՏԵՍԻԼ 12.

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՆԻԿՈՒ

Նիկուլ, առաջ գալով և հրապուրիչ ձևով:

Մամէդ տանը չէ,

Դէդէդ քնած է,

Նիկուլդ առաջիդ՝

Պատրաստ կանգնած է:

ՇՈՒՇԱՆ, ուրախացած:

Ախ, նիկուլ... (Դժուար և համբոյս):

Նիկուլ,

Շուշանիկս, սիրուհիս, հոգիս, մինչև ե՞րբ
 պէտք է մենք այս օրերը քաշենք, մի՞թէ սոցա
 վերջ չպէտք է լինի:

ՇՈՒՇԱՆ, հոգոց հանելով:

ԲՆՋ... Ինչ անիմ, նիկուլ ջան, մամէս մէ իր-
 ասածի մարթ է. էսօր առուտէհան, հէնց դուզն
 ասաւ. կակուլին է, վուր կայ ասում է, չիս իմա-
 նում, Խորիշան, թէ ինչ հանգի տղայ է, կօսէ:
 Ու մէկ էլ ասաւ վուր իմացիմ տուի, կօսէ, վուր
 կիրագի գան՝ նշան դնին: Ճար ունիս՝ ճար
 տիս, նիկուլ ջան:

Նիկուլ, հանդիսականաց:

Վայ քու տղիս տղայ: (Խնդրելով): Շուշանիկս,
 արի ու դու համաձայնիր իմաստած օյինիս. Աստու-
 ած, երկինք, գետինք վկայ է, որ մենք անպատճառ
 կհասնենք մեր նպատակին: Ես մինչև անգամ այս
 ձեր դրացի բժշկին ևս կտեսնեմ և կհասկացնեմ
 նորան բանի էութիւնը և անպատճառ նա ինձ կլսի,
 իմ խօսքիցը չի անցնիլ, նա ինձ շատ է սիրում:

ՇՈՒՇԱՆ

Գանա քիզ ո՞վ չէ սիրում, վուր նա չսիրի
Նիկոլ ջան:

ՏԵՍԻԼ 13.

ՇՈՒՇԱՆ, ՆԻԿՈԼ ԵՒ ՄԵԼՔՕ

Սյս միջոցին գալիս է Մելքօն ձախ կողմից միամիտ, որ անցնի
դէպի աջ, յանկարծ լսում է սոցա ձայնը. կանգ է առնում, ծածուկ
մտնելու է և հանաչում Նիկոլին:

ՆԻԿՈԼ

Հոգոյս հատոր, ի՞նչ ես ասում, հա՞ թէ չէ:

ՇՈՒՇԱՆ

Գանա իս քուներ չի՞մ, վուրնց գուզիս արա:

ՄԵԼՔՕ, ծածուկ հանդիսականաց:

Ը՛մմ... նրանն իմ ու նրանը, վուր ասում էր,
այ՛ թուրմէ ումն է էլի:

ՆԻԿՈԼ, ուրախացած շուշանի համաձայնութեան վերայ:

Իմ աղաւնեակ, իմ վարդ ու մանուշակ, այո՛,
ես հաւատում եմ, որ դու արդարեւ հոգով և
մարմնով յանձնուած ես ինձ... Ա՛խ... ես քեզ
համար ամեն գէպքում պատրաստ եմ և մինչև
ի մահ պատրաստ:

ՄԵԼՔՕ, առաջ գալով, ետից պինդ բռնելով և թափ տալով:

Իս էլ քիզ համա իմ պատրաստ... Դուն էստի
ի՞նչ իս շինում, հը՞... (Շուշանը փոխու՛մ է աջ): Տօ,
դուն ո՞վ իս, ասումիմ է՛... Տօ քիզ ո՞վ է էստի
համեցէք անում, հը՞... Տօ, քիզ ո՞վ է ասում վուր...
(Խֆո՛մ է) վուր իմ ախշկան գլխահան անիս, հը՞...

ՏԵՍԻԼ 14.

ՄԵԼՔՕ ԵՒ ՆԻԿՈԼ

ՆԻԿՈԼ, հանդիսականաց:

Սիրտս ասում է վեր առ սորան և այնպէս
տուր գեանովը, որ բոլորի նման տրաքի:

ՄԵԼՔՕ, թափ տալով:

Տօ, ի՞նչ իս փնփնթում, ի՞նչ... մէ բարձր ասա,
վուր իս էլ լսիմ է՛... (Թափ է գալէ): Տօ, ի՞նչ իս
դուն իմ աղշկայ բողաղը դուս կտրում է՛:
(Խֆո՛մ է և Խաչո՛մ):

ՆԻԿՈԼ, հանդիսականաց:

Ա՛յ գիտի սէր, այս բոլորը քո հետեանքն են...
(Մէլ+ջէն) Սպասեցէք պ. Մելքօ, սպասեցէք, ես
ձեզ բան ունեմ ասելու:

ՄԵԼՔՕ, չարացած:

Տօ, իս քու բանը չիմ ուղղում լսի, (Բընելէ):
դուս ասումիմ էլի:

ՆԻԿՈԼ

Պարոն Մելքօ, կարծեմ ձեր սրտի բարկութիւնը
գաղարեցրիք, դէ հիմա ինձ լսեցէք աղաչեմ:

ՄԵԼՔՕ, չարացած:

Իս վուրն ի՛չ չիմ ուղղում լսի... դուս ասումիմ:

ՆԻԿՈԼ, հանդիսականաց:

Սորանից լաւ միջոց չկայ... (Մէլ+ջէն) Ես քո
աղջկայ վերայ սիրահարուած եմ, նա էլ ինձ
վերայ, Եկէք դուք կակղեցէք, պ. Մելքօ, և մեր
պսակմանը համաձայնեցէք:

ՄԵԼՔՕ, աւելի ևս չարացած:

Տօ բէհէսաբ նամաղուլ իք անում, տօ՛, գը-

լուխներդ քարովն իք տալի, տօ ... տօ...

(Իրան գցում է Նիկոլի վերայ որ ծեծը նորոգի, բայց Նիկոլը այդ նկատելով իսկոյն սլանում է դէպի աջ: Մեքեն երեսի վերայ փռու-
վում է):

Նիկոլ, փախչելով

Որ տրաքուես՝ էս պիտի առնեմ աղջկանդ, էս:

ՏԵՍԻԼ 15.

ՄԵԼՔՕ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ

ԽՈՐԻՇԱՆ, աջ կողմից, վերայ հասնելով և բարձրացնելով:

Վոյ մէ, էդ ի՞նչ իս էլի, քա. էդ ի՞նչ իս փռու-
ուի, վիկաց, վիկաց թէ Աստուծ կու սիրիս:

ՄԵԼՔՕ, փռման վեր է կենում և շորը սրփում:

Այ քա՛նդուի ու բրիշակ ըլի ձիր զիմնաղիէն,
հը... Աստուծու կրակը ննգնի ձիր ուսումի մէջը,
հը... (Ձեռները երեսին բռնելով) Ձէ, լաւ է, վուր
դունչ ու պուռնկս չփշրուից (Նայելով ջեռներէ մէջ)
Ձիւնիրիս մէջը կի երվում է:

ԽՈՐԻՇԱՆ, զարմացած:

Մէ ասա տեսնիմ, էդ ի՞նչ իս էլի, քա. էն
ո՞ւմ հիգն էիր զալմաղալ անում:

ՄԵԼՔՕ

Ում հիգն էի... ում հիգն վուր էի, նա թռաւ,
ծապից... ամա դուն էսօր էսօր ախչկայ մէր իս,
մաշ չէ՞ ու:

ԽՈՐԻՇԱՆ

Ախար ի՞նչ է պատահի:

ՄԵԼՔՕ

Մաշ է՛տէնց իս ախչկանդ պահպանում:

ԽՈՐԻՇԱՆ

Ախար մէ ասա տեսնիմ, թէ Աստուծ կու սիրիս է:

ՄԵԼՔՕ

Ի՞նչ ասիմ... ուղղումիս իմանայ... ախչկիդ ու
էն շարլատան Նիկոլը, էստի սաս ու բաս էին
անում... մաշ էտէնց իս ախչկանդ մուղայիթ
կենում:

ԽՈՐԻՇԱՆ, զարմացած:

Վոյ, քուռանամ իս. էլի:

ՄԵԼՔՕ, ծաղրելով:

Իսքիդ համա պատրաստ իմ, կօսէ, իմ աղունակ,
իմ վարդ ու մանուշակ, կօսէ. էս կապ կորածն
էլ մէ էն հանգի խուսիկ մուշիկ էր գալի վուր,
վուր էլ չիմ կանայ ասի: (Հապա) Ամա վուր իս
վրայ էկայ ու, մէ լաւ ետխալամիշ արի ու...
մէ գայիր էնդի թամաշ անէիր է:

ԽՈՐԻՇԱՆ

Բաս էդ վո՞ւնց էլաւ, քա, վուր էստի վուռեցար:

ՄԵԼՔՕ

Տօ՛, զուրթ իս չիմ իմանում, թէ դա սատա-
նայ է, թէ կուրդղէլի է (նապաստի), թէ ինչէ:
Առչիդ կանգնած տիղը, էնէնց է (երես մարտի
այտնի բռնել, ցոյցահարով մեջահարով արեւացնելով)
դուրս թուշում վուր, կօսիս... կօսիս... չիմ իմա-
թէ ինչի՞ նմանեցնիմ: Մարդ մէ իմանայ. դրանց
էն զիմնաղումը էտունք էլ ին սովրեցնում:

ԽՈՐԻՇԱՆ

Ղուրթ լաւ, էտունք թուղ: Ի՞նչ արիր, քա:

ՄԵԼՔՕ, ուսերը վեր բարձրացնելով:

Էլ ի՞նչ պիտէի անի: Նա ծապից՝ իս էլ
փռուեցայ...

ԽՈՐԻՇԱՆ

էտու համա, չիմ ասում, էտու:

ՄԵԼՔՕ

Բաս ինչի՞ համա իս ասում:

ԽՈՐԻՇԱՆ

Նշան տուէրի համա վուր ասումէիր, վունց արի՞ր:

ՄԵԼՔՕ

Վճուց թէ վունց արիր. ամեն բանը իրա կարքով կէհա էլի, չիս իմանում:

ԽՈՐԻՇԱՆ

Հիմի, ասումիս, էքուց գալիս ի՞ն:

ՄԵԼՔՕ

Էքուց չէ, էքուց, վա՛: Առուտէհան քիզ չասի, վուր կիրագի գուքան ու մինք էլ պատրաստու-
թին պիտինք տեսնի՞...

ԽՈՐԻՇԱՆ, միտը ընկնելով և տխուր:

Քա զուրդ է՛: Ասա էս հանգի բանն էլ միտ-
քե՛մէն կու քցի՞ն:

ՄԵԼՔՕ

Էն հանգի վուր միր գլխնիրը իրար կպան հա՛,
բաս մտքումս բան կու մնէր: Իժու՞մ վաղուց
է միտքդ ահանճեմէդ գուս էկի:

ԽՈՐԻՇԱՆ, նեղանալով:

Դէ լա՛ւ: Մասխարի վուխտ իս գլթի՞:

ՄԵԼՔՕ

Բաս էն հանգի վուխտը էն հանգի մասխարա
կօնի՞ն:

ԽՈՐԻՇԱՆ

Ի՞նչ վուխտ, ի՞նչ մասխարա:

ՄԵԼՔՕ

Էն, վուր մութաքէն ջանումս նստեցիր հա՛:

ԽՈՐԻՇԱՆ, աւելի ևս նեղացած:

Է է է... հե՛րիք է քու հօրն օղորմի: Դուն
հէնց մասխարա արա, ամա չիս իմանում թէ
սրտեմէս ինչիր է անց կենում:

ՄԵԼՔՕ

Ի՞նչ է... էլի ինչիր է անց կենում:

ԽՈՐԻՇԱՆ

Վճուց թէ ինչիր: Ախար էլի դուն կիրագուայ
գցեցիր. ի՞նչ կուէր, էքուց գային ու նշնէին,
վուր մէ էրկու օր առաջ էս զլամաղալեմէն ու
անհամալթիններեմէն անգճնիրս դնջանար... իս
վուր խօսումիմ, ասումիս բռքութեցնումիս: Աբա
էս արարմունք է, վուր միր գլուխն է գալի՞:

ՄԵԼՔՕ, երկարացնելով:

Տօ քու հախն է... հալա էգ քիչ է... Այ, տե՛ս-
նումիս, ինստիտուտուտուտուտի շնուրքն էլ էս է, ա՛յ:
Իս վուր ասումէի թէ՛ էն քանդուածումը ախչիկ
չիմ տայ, էտու համա էի ասում, ա՛յ, էտու համա...
(Ուտերը վեր տալով) Ամա քու օկտեմէն ո՞վ կու-
քէր... (Ծաղրելով) Բանդուրբաշինց թուռը՝ էսէնց
է խօսում ոսիրէն, չիմ գիտի, Հախնաղարինց
Օսկնի ախչիկը՝ էսէնց շնուրքնիր սորվեցաւ, փլան
փստանինց ախչիկը՝ էսէնց էլաւ: Տօ, վճուր մէկն
ասիմ... Ամա իս, վուր չէի տալի իմ ախչիկը էն
խարաքէն, կօսէիր. (Հանալով շաշմով) չիս զմշում
փուղիրդ... կու իս ուղում մինձացնի ախչիկդ,
չիմ գիտի ինչիր, ինչիր... Ախար իս վուր մէկն
ասիմ է՛:

ԽՈՐԻՇԱՆ, հոգոց հանելով:
Ո՛ւֆ, ճիւղը գցից իտտակ... Իս սրա գլուխը
չունիմ (Գնում է դէպի աջ):

ՏԵՍԻԼ 16.

ՄԵԼՔՕ, միայն,

Իս էս բանումն էլ սրան չէի լսի, ամա չիմ
գիտի՝ թէ էն ի՞նչ չար սառամնայ էր, վուր
ինձ կակղացրուց ու գլխիս չքիւլայ գցից... Տօ,
կնի՞ր կն ինչ, վուր իրա խիւքն ինչ ըլի: Կնիկը
վուր խիւք ունենայ հա՛, վուրնցոր ասումին, մա-
զիբը էնքան էրգար կուլի՞... Ա՛յ տե՛սնումիք
(ցոյց արւելք է Բէր Նիւրդաշաւիլ Բուշէ Իւր հողերը)
իմ մազիբը հէջ չէ բռնվում էդ էնգուրմէն է,
վուր... (հալարս հալարս հան է գալիս) ըհը... (ցոյց
արւելք) էստի խիւք կայ, բանականութիւն կայ,
հասկացողութիւն կայ. խէր ու շառ հասկանալ
կայ... ա՛յ վուրնց: (Լալա՛ճ է եկեղեցի- զանգերի ձայները):
Վա՛, Փեթիւայինի զանգակներն էլ տուին...
(Խալ է հանում): Մուծը ննգաւ էլի՛... պա՛ պա՛
պա՛ պա՛... էս հանգի էլ ծօր կու անցկենայ, վուր
էս քանի տարուայ օրիրն ի՛ն... մարթ չի հասկա-
նում թէ, իմ¹⁾ լուսացաւ իմ մթնից: Ե՛հ աշ-
խարքն էլ զալբացաւ: (Նայելով երկինք): Վա՛, էփե-
ջայ մթնիլ էլէ, հա: (Ահա՛նջ դնելով): Ըհը՛, վուրտի
ձէն է գալի:

¹⁾ Իմ կնշնանի երբ, պէր է տարուանել իմ, կնշնան յեւէ է իսի համար:

ՏԵՍԻԼ 17.

ՄԵԼՔՕ ԵՒ ՆԻԿՕԼ

Գայիս է ձախ կողմից Նիկօ, Տփիսիս լաւ վաճառականի հա-
հագուստով- կասալով և այլն: Սա շատ աշխատել է, որ ամեն կեր-
պով նմանի Կակուլուն, որին շատ յայնդած է: Սա պէտքէ խաղայ
Կակուլու դերը: Մերթոյի հետ խօսելիս, աշխատում է միշտ հեռու
կանգնել, իսկ մօտենալիս կամ ձեռք տալիս, գլուխը կախ գցել:

ՆԻԿՕԼ,

Բարի իրիգուն, պարուն Մելքօ, Կակուլիդ
կիրագի իրիգուայ տիղը՝ հիմի է գալի. զարար
չո՛ւնի խօմ:

ՆԻԿՕԼ, հանդիսականաց:

Ձէնը փոխուել է՝ ամա չէ՛ կուլի անքուն
մնացած ըլի: (Նիկօլէ) Ա՛յ, Աստծու բարին քիզ
հիդ, պարուն Կակուլի, գալուստդ բարի ըլի:
Համեցէք, համեցէք գէթադուա:

ՆԻԿՕԼ,

Մագլօբելիվար: Ամա գիտիմ, դուն կու. ար-
մնաս, կօսիս. էս վուրտ իս ի՛նչ բան ունիմ էստի:

ՄԵԼՔՕ

Ձէ, չէ, ինչ արմնալու բա՛ն է, գէնացուալէ, մաշ
դուն չի՛ս ուզի, վուր մէքու տունը հանգիպի՛ս:

ՆԻԿՕԼ,

Ե՛տէնց չէ, է՛տէնց: Ա՛յ, ասիմ: էս օր իս Մոս-
կովէմէն դէպէ՛ք իմ սաացի վուր էսօրեւէտ իս
ճանապարհ ննգնիմ, գնամ մէ խիստ թայթի
գուրծքի համա:

ՄԵԼՔՕ, անհանգստութեամբ:

Խէ՛ր ըլի:

ՆԻԿՕԼ,

Խէր է, փառք Աստծու: էս օր յիդ գցեցի
գնալս, վուր առուտէհան դուս գնամ: Հիմի

իս էկիլ իմ մէն մենակ՝ մէ մատնիք տամ, վուր
դուք էլ արխէին կենաք, իս էլ: Ու թէ վուր
Աստուծ աչողից՝ Մոսկովէմէն իմ մագիար թէ
նշնի թէ հարսնիքի ամեն պատրաստութիւնը
կու բերիմ: Լաւ չիմ ասո՞ւմ:

ՄԵԼՔՕ, ուրախացած:

Խիստ լաւ իս ասում, հոգուտ մեռնիմ: Գու-
ղիս հէնց էս նմուտին նուշանին կանչիմ:

ՆԻԿՕԼ

Լաւ կուլի:

ՄԵԼՔՕ

Ամա չէ՛... գնանք տուն, ճրաքը կու վառինք,
համ մէ լաւ ուրախութիւն կօնինք, համ էլ...

ՆԻԿՕԼ, կտրելով խօսքը:

Ձէ, չէ, պարուն Մեքօ, իս խիստ իմ շտապում:
էքուան պատրաստութիւն պիտիմ տեսնի ու թայ-
թի գուրծքիք էլ ունիմ... հէնց էստի վերջա-
ցրէք, իս վառաղն իմ:

ՄԵԼՔՕ, ուրախ:

Դ՛ուն գիտիս: (Կանչում է) Խորիշան, Խորիշան:

ՇՈՒՇԱՆ, կուլիսի ետեից:

Ի՞նչ իս ասում, մամի ջան:

ՄԵԼՔՕ

Մէ գէգիգ ասա գայ ու դուն էլ մէ չուտ
էստի արի:

ՇՈՒՇԱՆ, կուլիսի ետեից

Էս նմուտիս:

ՆԻԿՕԼ, հանդիսականաց:

Ձէ, բանս յաջողում է: Ինձ չճանաչեց: Տես-
նենք ինչպէս է վերջանում:

ՄԵԼՔՕ, չկողին:

Շատ խօմ չիք յիգանայ Մոսկովումը:

ՆԻԿՕԼ

Ձէ, մէ էրկու շաբաթ:

ՄԵԼՔՕ, ուրախ:

Հա՛, էդ լա՛ւ է:

ՏԵՍԻԼ 18.

ՄԵԼՔՕ, ՆԻԿՕԼ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ, գալով աջ կողմից և յետ քաշուելով, իբր անծա-
նօթից ամաչեց:

Ի՞նչ իս ուղում, մամի ջան:

ՄԵԼՔՕ, ժպտով:

Էստի արի, հոգուտ մատաղ, ո՞ւրիս քաշվում
մէ էստի արի: (Ձեռից բռնելով և փաշելով դէպի նիւթը:
Շուշանը փնտ՛ է իջր շխտնալով:) Խորիշան, (կան-
չում է կնշ) չուտ արա մէ դուն էլ արի.
(նայելով աջ) Ի՞նչ էլար, ախար է՛:

ՏԵՍԻԼ 19.

ՄԵԼՔՕ, ՆԻԿՕԼ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ

ԽՈՐԻՇԱՆ, միայն, ներս գալով աջ կողմից տեսնում է, որ
շուշանի ձեռք տալիս է Նիկօլին:

Էդ ո՞վ է, քա՛. ի՞նչ բանի վրայ իս:

ՄԵԼՔՕ, ուրախ:

Խիստ լաւ բանի վերայ իմ, Խորիշան: Միք
փեսայուն է՛:

ԽՈՐԻՇԱՆ, նեղացած:

Քա, իս էտէնց պիտիմ նշնի իմ ախիկը, գանա

շատ ունիմ. վուռնց մարթ կայ, վուռնց էլ սա-
ղանդար, թէ վուր էտ, էր էտ ի՞նչ կուլէր մէ էր-
կու սահաթ առաջ ասէիր, վուր մինք միր պատ-
րաստութիւնը տեսնէինք: Ախար կիրագի էիր ա-
սո՞ւմ... (Զարայո՞ք) Ի՞նչ քու ասած մարթիս, քա՛:

ՆԻԿՈԼ, ուրախ:

Վա՛, հիմի դուռն ուրախ չիս, վուր հէնց է-
սորհէտ էլամ:

ԽՈՐԻՇԱՆ

Խիստ իմ ուրախ, ամա էտէնց էլ նըշ...

ՄԵԼՔՕ, խօսքը կտրելով:

Տօ, մէ սրի, շատ մի խօսա, իժուամ կօսիմ բանի
էութիւնը: (Նիկօլը հարանն դնում է Շո-լանի հարը:
Մէլքօն օրհնում է): Աստուծ շնորհաւոր անէ, մէ
բարձի վրայ ծիրանաք. հայր Աբրահամի օրհնու-
թիւնը ձիզմէն անպակաս ըլի, վուրթիքս: (Խոփ-
շանն) Տօ, մէ արի դուռն էլ օրհնի է՛:

ԽՈՐԻՇԱՆ, որ երեկոյեան մթութիւնից չէր ճանաչել իւր փեսա-
ցոյին, մօտենումէ, նայում է Նիկօլի երեսին և ճանա-
չում է նորան: Ուրախ:

Քա՛, մնշ կակուլի, կակուլի էիր ասում. էս
վոռնց էլաւ, վուր էլի Նիկօլին տուիր: Մարթ
քիմէն գլուխ չի հանի:

Սկսում է օրհնել երկար ու բարակ ժպիտը երեսին, աչքը զցե-
լով մէկ Նիկօլի, մէկ Շուշանի երեսը:

ՄԵԼՔՕ, վրդովվելով խորշանի խօսքից յետոյ:

Վոռնց թէ Նիկօլը... (Սօփեանայով և շայելով
Նիկօլի երեսին): Տօ, զուրթ (Գլխին խփելով, հանդիսա-
նապ) Նիկօլն է: (Շարապելով) Խորշան, էլ մի
օրհնի, էլ մի օրհնի. սա միզ խայտառակից: Տօ,
դուս ասումիմ է՛, դուռն միզ մասխարայ իս ա-

նո՞ւմ: (Խփելով) Քու էրէխէն ո՞վ է, ո՞վ: (Հանդի-
սանապ) Ե՛սէնց բան կուլի, էսէնց էլ բանիք
տեսի՞... Այ թուրմէ ինչի համա չեկաւ տուռն...
(Զարայով) Թայթի գուրծքիւր ունիմ կօսէ: (Նիկօլն)
Դուռն հալա էստի ի՞նչ, դուս ասումիմ էլի... (Կա-
նում է յարչակումէլ վերան՝ բայց հարբեղելով նորա արա-
նեքը, իրեն պահում է և յեպ ու յեպ է Ժաշլում:) Վա՛...:

ՆԻԿՈԼ, նկատելով, որ ամենայն ինչ պարզօրէց ասում է հան-
դարդ և վճռողաբար:

Տեսնում էք, պ. Մելքօ. Աստուծ էլ կա-
մեցաւ, որ մենք ձեր օրհնանքը լսենք, էլ մի հա-
կառակուէք. ասացէք Աստուծ եղածն օրհնի:

ՄԵԼՔՕ, չարացած և յեա քաշուելով, որ մի գուցէ զուլսը էլ
օյին հանի:

Տօ, էնէ վուր Աստուծ կամքով չիս ժաժ գալի
է՛... Ախար սատանի օյիներ իս հանում իմ գլուխը:

ՆԻԿՈԼ

Պարոն Մելքօ, Աստուծոյ կամքով էլ ժաժ
եկայ, բայց դարձեալ դուք ձեր ասածն արիք է՛:

ՇՈՒՇԱՆ, լացակրկնած:

Մամի ջան, քիզ գրուստը կօսիմ: էլ իս ուրիշ
օքմնի չիմ ապ իմ ձիռս՝ թէ վուր գոռիս էլ՝ իս
ինձ կու գեղիմ ու ուրիշի չիմ գնայ:

ԽՈՐԻՇԱՆ

Վոյ քոռանամ իս, էգ զադա էլ համարձա-
կութի՞ն:

ՄԵԼՔՕ, շուշանին:

Տօ, տօ, ձէնտ կտրի է՛: (Նիկօլն) Ե՛լի դուռն
էստի ի՞նչ, դուս է՛:

ՆԻԿՈԼ

Ես հէնց այստեղ ինձ կմահացնեմ և դուրս չեմ
գնալ: (Յայց Կալով Լոյսի մէջ Ժաշլումէլ վերան)

ՄԵԼՔՕ

Ջհանդամը քու գլուխը, վուր կու դեղիս:
Մէ շանով պակաս կուլի քաղաքը:

ՇՈՒՇԱՆ, վճողաբար:

Իս էլ ինձ կու դեղիմ ու մահապարտը գուն
կուլիս:

ՄԵԼՔՕ, վերին աստիճանի չարացած:

Դուն էլ կու դեղիմ, հա... թէ վուր էտէնց
է, դուն էլ գուս իլ էսղանցօքէն: Դուն էլ իմ
ախիկը չիս, գուս:

Նիկօլը Շուշանին գլխով է անում:

ՇՈՒՇԱՆ, վճողաբար:

Դուղիս գուս կեհամ:

ՆԻԿՕԼ, Շուշանին:

Արի գնանք, Շուշան, տեսնում ես գուրս է
անում: (Կապենո՞ւ է Կառէլ):

ԽՈՐԻՇԱՆ, չարացած, Մելքային շտապաւ ասում է:

Ո՛ւր իս թողնում տանի, քա. միղ խայտա.
ռակիլու միտք խօմ չունիս: Կէհան ժամումը
կուսպակուին ու իժում: Ուղումիս մէ մատ
միղը ըլինք խալիումը:

ՄԵԼՔՕ, Նիկօլին:

Տօ, ո՛ւր իս տանում իմ ախիկը: (Բռնելով) Դո՛ւս
ասումիմ է... շատ պիտիմ կրկնի... (Շաք չարա-
ցած) է է է... իս քու գլուխը չունիմ: Խորիշան,
մէ գնա էն ջոխին բի, իժում իս գիտիմ ու սա:

Նիկօլը և Շուշանը մի բան են հանում՝ գրպաններից և զգում են
բերանները: Այս նկատում է խորիշանը: Մելքօն չարացած ման է գալիս:

ԽՈՐԻՇԱՆ, սրտապատառ:

Վոյ, քուռանամ ու կուրանամ իս. (Մէլքային):
Գիղը կերան, քա: Մէ էօտի թամաշ. ռանգուդ-
նիրը գնաց: Ճար ունիս ճար տիս:

ՄԵԼՔՕ, անհոգութեամբ:

Տօ, մէ էն ջոխին գնա բի, իս գիտիմ սրանք,
ինձ Մելքօ կօսին: Ինձ էդ հանգի բանիրով
չին կանա վախեցնի:

ԽՈՐԻՇԱՆ

Վոյ, վոյ... գետինը պատուի ու ինձ դէվէր
տանէ, վուր իս էս հանգի բանիր տեսնիմ
վուչ: (Վաղում է յախ):

ՄԵԼՔՕ, խորիշանի յետևից:

Վա ո՛ւր իս գնում: ջոխին բի ասումիմ: հա. չիս
բերում: իս կու բերիմ: (Դնում է և իսկյն վերադառ-
նում է մէ մէ Կապենո՞ւ քեռէն. Ժողովում է շարանց ոք
խէն. Բայց Կապենո՞ւն Բարձրացնելով Ժողով է ապշած:)

ՏԵՍԻԼ 20.

ՆՈՔԱ ԱՌԱՆՑ ԽՈՐԻՇԱՆԻ

ՄԵԼՔՕ, կակղած:

Տօ, ղուրթ էրկու էրկու մեգնուեցան... չըլի
ղուրդ գիղ էր՝ վուր կերան... էս ի՛նչ էր, վուր
էկաւ գլուխըս: (Նայելով նոյա վերայ և վեր գցելով
յեռախցի փայտը) Վոյ մէ, վոյ մէ, տիս վունց ին
չալիշ գալի է... (Գլխին Կառէլ) Վա՛յ գլխիս, էս
ի՛նչ օյին էր: (Հանդիսանալով) Ախիկեմէս ղրկուիլը
մէկուռ, էս սուղէքանց մէջն ու սիրիբ գնալն
էլ մէ կուռ... (Դնում է Շուշանի ձեռք) Շուշան,
Շուշան, (Նիկօլին) Նիկօլ... վոյ մէ, աչքիրը ու-
ղումին կողպին: (Լալայիլնալով) Շուշան ջան, Շու-
շան, վիկաց վուրթի... քու քէվն ըլի վուրթի...
էս օրվայ համա՞ իս քիղ ինսիտիտուտուտուտումը

առեի... (Գլխին հալով) վաղ գլխիս... (Կանգնելով)
Խորհշան. (Հանդիսակապ) նա էլ չկայ: Տօ, էս
խնչ, զալաթ էր, վաղ արի... (Այս կողմ այն կողմ)
Տօ, մէ քուր բերէք, քուր հա... (Հանդիսակապ)
օչով չկայ... Մէ վաղիմ միւր գոխտուրին կանչիմ:

Մեքօն վաղում է ձախ: Խորհշանն էլ վաղելով գալիս է նոյն
կողմից: Շատ վատ կպչում են իրար:

ՏԵՍԻԼ 21.

ՆՈՅՆՔ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ

ՄԵԼՔՕ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ

Վոյ մէ...

ՄԵԼՔՕ, սիրտը բռնելով, շտապաւ:

ՄԼՔ... Տօ խնչ էլար, ուր գնացիր: Դու գնա
մէ չուստ քուր հասցրու, էրէսներին ածա, իս
էլ մէ գոխտուրին հասցնիմ:

ԽՈՐԻՇԱՆ, խկոյն:

Իս գնացի մօտը: Դոխտուրը գալիս է, մի
գնա: Արի մէ ճար անինք:

ՄԵԼՔՕ, յեղ գառնալով, լացակրկնած:

Էլ խնչ ճար. աչքիւրը կողպեցին ու բերան-
նիւրը բաց ու խուլի ին անուամ:

ԽՈՐԻՇԱՆ, վաղելով և ծնկան խիւլով:

Շուշան, (չգոհ է իր խնչից) Շուշան քան, Շու-
շան, մէ աչքիւրդ բաց արա, վորթի քան,
գէնացու ալսա գէղէն:

Մեքօն ևս արտասուքն աչքերին մօտենալով նոցա, նայում է
աննդհատ Շուշանի երեսին և ժամանակ առ ժամանակ շփոխ
և նոցա ամեն մի շարժմանց համար, լըր ծնկան և գլխին է խփում:
Բժշկի գալը չեն նկատում:

ՏԵՍԻԼ 22.

ՄԵԼՔՕ, ԽՈՐԻՇԱՆ, ՆԻԿՕԼ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ԲԺՇԿ

ԲԺԻՇԿԸ, գալիս է ձախ կողմից և նայելով վայր ընկածներին,
ասում է հանդիսակապ:

Խնչ արհեստութեամբ խաղացել են իւրեանց
գերերը և ինչպէս յիմարացրել այս երկու պա-
ռաւներին... Ուրեմն առանց միջոց կորցնելու
ես էլ խաղամ իմ գերս:

Այս միջոցին Մեքօն նկատում է բժշկին, լացակրկնած և ձեռքերը
պարզած աղաչելով ասում է:

ՄԵԼՔՕ

Ա՛խ գէթաղուա, դոխտուր քան, մէ հասի է:

ԲԺԻՇԿ, իբր չիմանալով:

Ուր են, ճրտեղ են... (Եւ իբր հանկարծ նկատելով
և հօգնելով) Այս խնչ է՝ պ. Մեքօ. այս խնչ
տեղն էք հասցրել... միթէ այս բան է, որ դուք
էք արել: Հիմա դուք պատասխանատու կլինէք
մարդոց, գատաստանի և Աստուծոյ առաջ: (Բը-
նելով երկուսի շարժումները) Ա՛խ, սիրահարութիւն,
սիրահարութիւն, քանի քանի այսպիսի զոհեր ես
տարել... (Թողնում է շարժումները և վերհեռւում)
բանը բանից անց է կացել... պետք է Պօլիցիային
յայտնել:

ԽՈՐԻՇԱՆ, վեր թռչելով և լացով:

Վոյ բռնանամ իս... (Հասնելով Շուշանին)
Շուշան քան, գէթաղուա, Շուշան (Բժշկին) Ամա,
դոխտուր քան, էրեսը տաք է:

ՄԵԼՔՕ, չոքելով բժշկի առաջ:

Դոխտուր քան, էլ փուղ չիմ խնայի, ճար
ունիս ճար տիս:

Բժիշկ, սառնութեամբ:

Իհարկէ նոր ոչինչ չէք խնայիր, բայց էլ ի՞նչ ճար:

Անցնում է մի միջոց: Խորիշանը գլուխը դրած Շուշանի գլխին, ազիտորմ լալիս է, իսկ Մելքօն չորսո՞ւմ բժշկի առաջ, նայում է երեւին, սպասելով նորա վերջնական պատասխանին:

Բայց մի բան կայ. եթէ խոստանա՞ք, որ անպատճառ ձեր աղջկան կտաք սորան, (ցոյց Կարլո Նիկօլին) ես սոցա կլաւաջներմ:

ԽՈՐԻՇԱՆ ԵՒ ՄԵԼՔՕ, տեղերից վեր թռչելով և մի փոքր սիրտ առած:

ՂՈՒՐԹ:

Բժիշկ

Ուղիղն եմ տոռւմ... ես ձեզ խօսք եմ տալիս:

ՄԵԼՔՕ, շտապա:

Տուեցի ու տուեցի դոխտուր ջան, ամա մէքիչ չուստ արա, հոգուտ մատաղ: (Փոփոխ Դ Կարլին նշանակութիւն Կարլո) Փուղ էլ չիմ խնայի, դոխտուր ջան:

ԽՈՐԻՇԱՆ, Շուշանին:

Վուտիդ տակին մեռնի դէդէն, Շուշան ջան:

Բժիշկ

Իսկ եթէ...

ՄԵԼՔՕ, աղաչանաց ձեռով և կտրելով նորա խօսքը արագ:

Քու արիւն ու իմ արիւն գիտենայ, Աստուծ թուղ ըլի վկայ, դուն վկայ, իմ վուրթկիրանց արիւն վկայ, էս օրուայ օրը վկայ, էրէկուայ անմահ պատ—ար...

Բժիշկ, ձեռը մեկնելով:

Լաւ, լաւ, դէ տուեցէք ձեր ձեռը:

ՄԵԼՔՕ, իբր կամենալով մտնել նորա մահի մէջ:

Իս վուտով ու գլխով քիզ, դոխտուր ջան. մէջուստ արա, գէթ աղուա, վուխտը անց է կենում:

Բժիշկ, չթողնելով իրան կաշի:

Հաւատացի հիմա, հաւատացի: (Կարաւալով վայր ընկա՞նքէրէն) Նիկօլ, Շուշան, վեր կացէք:

Նիկօլը և Շուշանը ծիծաղալով և ուրախ վեր են թռչում կանգնում: Մելքօն և Խորիշանը զարմացած և մի գաղ բերանները բաց ու ձեռերը չափած, մնում են անշարժ կանգնած: ՏԵՍԱՐԱՆ: Յետոյ գլխի են ընկնում, որ այս բոլորը շինծու է եղել և ոչ իսկապէս: Խորիշանը միաների հետ ծիծաղում է:

Բժիշկ, ծիծաղելով:

Այս անգամ Աստուծ շնորհաւոր անի, ինձ էլ քաւոր անի:

ՄԵԼՔՕ, որը, որպէս խաբուած չէր մասնակցում նոցա ծիծաղին, կինձը քորելով ասում է:

Ախար իս գիտիմ է: Ախ ինսիտիտուտուտուտ... ախ դիմնաղիա... (Ուտը վէր Կարլոյ, Կարլին Կարաւայ) էլ չարէս ինչ:

(Վարա՞նքը իջնո՞ւ է):



**ԳՐԱԽՍ ՀԵՂԻՆԱԿԻ
ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐԸ**

ԽԷՉՕՑԻ ԹՈՒՋԸ

Ֆարս-վոդեվիլ, մէկ արարուածով զինն է . 50 կ.

ՄՕԿԱ Կօմեդիա մէկ արարուածով զինն է 50 կ.

ԿՌՈՒԱՊԱՏՃԱՌԸ ՆՍ ԷՒ

Կօմեդիա վոդեվիլ երկու արարուածով զինն է 50 կ.

ԷԼ ՉԱՐԷՍ ԻՆՉ ԿԱՄ ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ

Կատակերգութիւն մէկ արարուածով զինն է 50 կ.

ՍԷՐ ԿԱՄ ՄԱՀ մէկ արարուածով զինն է 50 կ.

ՋՐԿԱՆՔԻ ԶՈՀ

Դրամա 4 գործողութիւնով և վեց

պատկերով զինն է 80 կ.

ՉԱՐՔ

Կատակերգութիւն մէկ արարուածով

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ

(Բեմական պարտաւիճակ)

ՎԱՅՐԵՆԻ

Կատակերգութիւն մէկ արարուածով . . 50 կ.

ԲԱՐԵԿՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ

Դրամա 5 արարուածով զինն է 1 ը.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՃՐԱԿՈՐԾԻ ԸՆՏԱՆԻՔ

ՀԵՐԿՈՒԼԷՍ.

} մէկ զբաղում, զինն է 2 ը.

Վերոյիշեալ պիւսները վաճառվում են նրեանում
հեղինակի մօտ և Տիֆլիսում - Կենտրոնական գրախ-
ճառանոցում:

ՄԵՐ ՀԱՍՑԵՆ

Эривань. Эмину Теръ-Григорянцъ.

18373

2013

